



Լեւ ԿաՄսար

Փառապանծ Վրիպակներ

Ազգերու լիգա

Երկու խոսք ալ սա հաստատության մասին ըսեմ:

Ի՞նչ է Ազգերու Լիգա:

Քաղաքական այն հարցերը, որ մեծ պետությունները 21 օր վրան նստել են վերջ չեն թխսեր, այդ հարցերը կոչեն Ազգերու Լիգայի տակ:

Ի՞նչ է Ազգերու Լիգա: -»Կոմպրես», որ կորվի դիվանագիտական վերքի մը վրա՝ գայն հավիտյանս չլուծելու համար: Անիկա ոչ այլ ինչ է, եթե ոչ պառավական դեղ, որուն կոչման բժիշկներն հույսերնին կտրած հիվանդները:

Լիգան «սուրբ» մըն է, որուն կոչման անճարները... չբուժվելու համար:

Ի՞նչ է Ազգերու Լիգա: -

Ծանրություն մը՝ դրված դիվանագիտական թուղթերու վրա... որ քամին չտանի:

Լիգան այն բանքն է, ու երբ մեկը չուզենա իր պարտքը տալ, անոր վրա «փոլից» կքաշեն:

Լիգան փայտե հրացան մըն է, որը ոչ մեկի չի վախեցներ:

Վերջապես Լիզան «Աշխատանքի Բորսա» մըն է, ուր կղիմեն խնդրատուներ,
աշխատանք... չստանալու համար:

Ահա ինչ է Ազգերի Լիզա:

Թուրքիան ոչ թե մի ազգի, այլ համաշխարհային դահիճ է:

1960

Թուրքիան չարիք էր, երբ չկար բոլշևիզմը, բոլշևիկների աշխարհ գալուց հետո
նա դարձավ «փոքրագույն չարիք»:

Որովհետև նա թուրքից ավելի անգութ կոտորեց հային, Շահ Աբասից ավելի
անդարձ Սիբիր տեղահանեց հայ ընտանիքներ:

Մի գիշերվա մեջ տասներկու հազար հայ ընտանիքներ:

1960

Օրումս ես բարի ազգ կամ պետություն չեմ տեսել: Մի պետություն, որ
կահ-կարասի առած ժամանակը մի ավել աթոռ էլ գներ հյուրերի համար: Ասեր՝
էս աթոռն էլ առնեմ, մի հարևան պետություն տունս մտնելիս ոտքի վրա չկանգնի:
Ո՛չ: Այդպիսի բան չկա: Հայ ազգը սա վեց հարյուր տարի ոտքի վրա է, ոչ մի մեծ
պետություն աթոռ չառաջարկեց, թե ա՛յ տղա, առ նստիր: Այն էլ իր սեփական
հողի վրա:

1960

Երկուշաբթի 7.- Կարելի է ասել, որ հայ ազգը ներկայիս գոյություն չունի: Նրա
կեսը թուրքերը կոտորեցին 1915 թվին, մնացյալ կեսն էլ դաշնակ ու բոլշևիկ են,
որոնք ավելի ոխերիմ են իրար, քան երբևիցե եղել են հայն ու թուրքը:

Ուրեմն, էլ ի՞նչ հայ ազգ:

Կոմունիստների աշխարհի գալուց հետո մարդկությունն էլ գոյություն չունի երկրագնդի վրա: Այն բաժանված է երկու մասի, շատ շուտով այդ մասերն իրար կբնաջնջեն, ու վերջ մարդկությանը...

1960

Երկիր մը, ուր ապրելու բոլոր ճամբաները գոցված են՝ գեթ մահը պետք է դյուրին ըլլա:

Պետություն մը, որ գիտե սպանել՝ պիտի գիտնա նաև թաղել իր ժողովուրդը...

1928